

Սեպտեմբեր 2026

նույն պահեր.
անք միասին:
զի կարենանք
ինքերուն հետ:

A map of Armenia divided into 10 regions, each with a unique color and labeled in both Armenian and English. The regions are: Gegharkunik (pink), Lori (blue), Tavush (orange), Aragatsotn (green), Yerevan (red), Gegharkunik (light blue), Ararat (purple), Vayots Dzor (magenta), Gegharkunik (dark blue), and Gegharkunik (light green). The map also shows the borders of Georgia to the north and Azerbaijan to the east.

Մինքն Ջուլիանեանէն ժառանգ կը մնայ մեզի
իր հայրենադարձութեան գաղափարախօսութիւնը:
Բոլոր ազատամարտիկներուն նման, իր յիշատակը
միշտ վառ պիտի մնայ մեր հոգիներուն մէջ:

ԿՈՌՒՆԿ

Խոշոր եւ բարձրահասակ կռունկը մաս կը կազմէ թռչուններու ընտանիքին: Երկար ուղքերով եւ երկար վիզով այս անասունը, կանգնած վիճակին 90-155 սմ. հասակ կ'ունենայ: Բարակ մաշկ մը կը միացնէ անոր առջեւի մատները: Պոչը կարճ է: Ընդհանրապէս էգ եւ արու կռունկները միագոյն փետուրներով ծածկուած կ'ըլլան: Կ'ապրին բացօթեայ տարածքներու մէջ, ըլլայ տափաստաններու, ճահիճներու թէ դաշտագետիններու վրայ: Անոնք կ'ածեն 1-էն 3 հաւկիթ: Ձագերուն հոգ կը տանին թէ՛ էգ, թէ՛ արու կռունկները: Անոնք սնունդ կը ստանան ուտելով սերմեր, հատապտուղներ, բոյսերու արմատներ, միջատներ, փափկամորթներ եւ մանր կրծողներ:

Կռունկներու քանակը նուազած է ճահիճներու չորացման եւ անմշակ հողերու գրաման հետեւանքով: Աւելին, կարգ մը կռունկի տեսակներ բոլորովին անհետացման սպառնալիքի տակ կը գտնուին: Գոյութիւն ունին կռունկի 15 տեսակներ, որոնցմէ երեքը՝ ճերմակ, մոխրագոյն եւ տափաստանային կռունկները կը բնակին Հայաստանի հողերուն վրայ, լեռնային շրջաններուն մէջ:



ԿՈՒՌՒՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Պանդուխտը հայրենիքէն հեռու, աշխատելու եւ իր ապրուստը վաստակելու համար օտար երկիրի մը մէջ ապրող անձն է: Պանդուխտներ ապրելով հեռու իրենց հարազատներէն եւ իրենց հայրենի տունէն, բազմաթիւ երգեր յօրինած են արտայայտելով իրենց ցան ու տառապանքը, ինչպէս նաեւ իրենց սէրն ու կարօտը հայրենի հողին նկատմամբ: Պանդխտութեան երգերուն մէջ, կը յիշուի կռունկը, որովհետեւ պանդուխտներ կռունկի նման կը թողէին իրենց ծննդավայրը, օր մը ետ հայրենիք վերադառնալու նպատակով. աշնան դէպի տաք երկիրներ գաղթող եւ զարնան դէպի երկիր վերադարձող կռունկներու նման:

Աւելին, պանդուխտը գիտէր, թէ կռունկը ազատօրէն կրնայ թռչիլ ու հասնիլ հայրենիք, մինչ ինքը՝ ոչ: Հետեւեալքար ան կռունկէն կը խնդրէր, որ իր սրտի խօսքը փոխանցէ իր ընտանիքին:

ԿՈՌՒՆԿ (ԵՐԳ)

Խօսք՝ Արթիւր Անդիկեանի

Կռունկ, գնա՛, մըր երկիր,
Կարօտս տար հայերուն,
Աւեր դարձած պապերուս,
Շինած երկիրը կանգուն:

Ու թեւածիր լայնարձակ՝
Արարատի լանջերին,
Հայոց հողը համբուրէ,
Ուր տիրում է թշնամին:

Ախ երբ կը գայ այն օրը,
Երբ գիրկդ գամ ես Սասուն,
Սասնայ բարձրիկ լեռներուս,
Պարզիմ հայոց եռագոյն:

Անդրանիկի պէս հզօր,
Զաւակներ ես դու ծնել,
Սահմաններդ դարբերով՝
Անառիկ են մնացել:

Ու թեւածիր լայնարձակ՝
Արարատի լանջերին,
Հայոց հողը համբուրէ,
Ուր տիրում է թշնամին:

ՄԱՐՏՈՒՆԻ

Մարտունի շրջանը Արցախի հանրապետութեան 8 շրջաններէն մէկն է: Շրջանի մակերեսը 951 քառ. քմ է: Վերջին արձանագրութիւններուն համաձայն, 2005 թուականին, բնակչութեան թիւն էր 23,157 մարդ: Շրջանին կեդրոնը համանուն Մարտունի քաղաքն է: Մարտունի շրջանը կը գտնուի Արցախի հարաւ-արեւելեան կողմը, 400 մ. բարձրութեան վրայ: Կը բաղկանայ 36 համայնքներէ եւ 40 բնակավայրերէ: Ամենամեծ բնակավայրերէն են Մարտունի եւ Ճարտատ քաղաքները, ինչպէս նաեւ Բերդաշէն, Գիշի, Թաղաւարդ եւ Սոս գիւղերը:

Մարտունի շրջանի արեւմտեան մասը ունի գեղեցիկ տեսարան եւ հարուստ է պտղատու ծառերով, անտառներով եւ գետակներով:



ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔԸ



Տարածքին մէջ կան մեծ թիով հայկական ճարտարապետական կո-թողներ. անոնցմէ ամէնէն նշանաւորն է Ամարասի վանքը, ուր Մեսրոպ Մաշտոց բացած էր նահանգի առաջին դպրոցը: Պատմական այլ վայրերէն են՝ Կարմիր Եղցի համալիրը, Բերդաշէնի ամրոցները եւ շրջանի հարիւրաւոր եկեղեցիներն ու յուշարձանները:

Այսօր, դժբախտաբար, տարիներու պայքարէ ետք, Մարտունի շրջանը ժամանակաւորապէս կը գտնուի Ատրպէյճանի տիրապետութեան տակ:

Այս պատճառով, անհրաժեշտ է վառ պահել մեր արցախեան հերոսներու յիշատակը, որոնք իրենց կեանքի գնով պաշտպանեցին այս հողերը:

ԽՈՒՄԲ ՄԸ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս ամառ, երկար սպասումէ ետք, ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Մոնթրէալի եւ Լաւալի «Դրօ-Գետաշէն», ինչպէս նաեւ Թորոնթոյի «Քրիստափոր» մասնաճիւղերէն 28 պատանիներ ուղղուեցան հայրենիք ըմբոխշնելու անոր գեղեցկութիւնն ու ամբարելու նոր գիտելիքներ: Ահաւասիկ անոնց վկայութիւնները այս պտոյտէն.

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Մեր երկրորդ օրը սկսաւ Հրապետութեան Հրապարակի այցելութեամբ, ուր շատ հետաքրքրական գիտելիքներ ստացանք Երեւանի պատմութեան եւ ճարտարապետութեան մասին: Ապա, Կասկատի համալիրը բարձրացանք եւ ըմբոշխնեցինք մայրաքաղաքին գեղեցկութիւնը: Սակայն, օրուան ամենաազդեցիկ պահը Եռաբլուր այցելութիւնն էր: Հոն գտնուիլը բոլորիս մէջ տարբեր զգացումներ ստեղծեց: Այդ այցելութիւնը մեզի առիթը տուաւ պահ մը լուռ մտածելու եւ գնահատելու մեր պատմութիւնը եւ այն հերոսները, որոնք կերտած են զայն: Երեկոյեան գացինք Օփերային թատրոնի շէնք, ուր դիտեցինք «Բերդ» պարային խումբին ներկայացուցած հայկական-մշակութային ելոյթը: Այս միջոցառման շնորհիւ մեր պտոյտին երկրորդ օրը շատ գեղեցիկ եւ յիշարժան աւարտ մը ունեցաւ:



Սէրլի Խօշեան

ԵՐՐՈՐԴ ՕՐ

Առտու, պատանիներով ուղղուեցանք դէպի Ծիծեռնակաբերդ: Հոն իւրաքնասչիւս նկարուեցաւ իր տեղահանուած նախահայրերուն բնակած շրջանի անունին տակ: Յետոյ անմար կրակին շուրջ ծաղիկներ գետեղեցինք, յարգելով մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը: Ապա ուղղուեցանք դէպի յուշահամալիրի թանգարանը, ուր սորվեցանք շարք մը նոր գիտելիքներ: Թանգարանի պտոյտէն ետք, շուտով փոխադրակառք նստեցանք, որպէսզի ուղղուինք դէպի Ապարան: Երկար ժամանակ սպասելէ ետք, հասանք Ապարան եւ քալեցինք դէպի Դրաստամատ Կանայեանի շիրիմը: Շիրիմին առջեւ, ընկերներս եւ ես ծաղիկներ գետեղեցինք եւ Դրոյի յիշատակին երգը երգեցինք միասին:

Պանդոկ վերադարձի ճամբուն վրայ նաեւ կեցանք տառերու պուրակ, ուր ամէն մէկ պատանի նկարուեցաւ իր անունի առաջին տառին կողքին: Օրուան վերջաւորութեան, Օշական գիւղի եկեղեցին այցելեցինք, ուր միասնաբար աղօթեցինք ի յիշատակ մեր վաղամեռիկ կրտսեր ընկերուհի Լենիա Եաղճեանին:

Ռաֆայէլ Եսայեան



ԶՈՐՐՈՐԴ ՕՐ

Զորրորդ օրուան առաւօտեան նախաճաշեցինք, ապա այցելեցինք Գեղարդի վանքն ու Զարենցի կամարը, ուր հիացանք Հայաստանի գեղեցիկ բնութեամբ եւ պատմական վայրերով: Այնուհետեւ գացինք Գառնի, ուր աւելի մօտէն ծանօթացանք մեր հին պատմութեան եւ մշակոյթին: Կէսօրին ճաշեցինք, հանդիպեցանք Թաթուլ Կրպէեանի այգի, ուր ծանօթացանք Իրինա Կրպէեանին, որ մեզի պատմեց իր ամուսինին՝ Թաթուլ Կրպէեանին կեանքէն անմոռանալի պատմութիւններ: Օրուան աւարտին ընթրեցինք եւ ազատ ժամ ունեցանք, որ մեզի առիթը տուաւ զբօսնելու Երեւանի թաղամասերուն մէջ:

Արամ Տէմիրճեան



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

Հինգերորդ օրը ընկերներով Սարդարապատ այցելեցինք, ուր ծանօթացանք հայ ժողովուրդի պատմութեան ամենափառաւոր էջերէն մէկուն: Այցելութեան ընթացքին տեսանք հսկայական յուշահամալիրը եւ Սարդարապատի թանգարանը:

Մասնակցեցանք նաեւ խաչքարի դասընթացքի, ուր սորվեցանք խաչքար քանդակելու արուեստը: Այդ փորձառութիւնը մեզի ցոյց տուաւ, թէ որքան դժուար, համբերութիւն պահանջող եւ մանրակրկիտ աշխատանք է խաչքարի քանդակագործութիւնը: Դասընթացքի աւարտին իւրաքանչիւր պատանի իր անունին տառով խաչքար մը նուէր ստացաւ, որ յիշատակ պիտի մնայ այս ճամբորդութենէն:

Ապա այցելեցինք Էջմիածինի Մայր Տաճարը եւ անոր թանգարանը: Հոն տեսանք բազմաթիւ սուրբերու մասունքներ, որոնց շարքին՝ Նոյեան Տապանէն մասունք մը: Այցելութեան ընթացքին նաեւ մօմ վառեցինք եւ աղօթեցինք մեր հին ու նոր հերոսներուն յիշատակին:

Օրը աւարտեցաւ Զուարթնոց տաճար եւ յարակից թանգարան այցելութեամբ: Հոն սորվեցանք տաճարին հարուստ պատմութիւնը, յատկապէս անոր քանդուելուն մասին: Հետաքրքրական էր, որ Զուարթնոցը կլոր գմբէթով եկեղեցի մըն էր: Այցելութեան ամենատպաւորիչ պահերէն մէկը Արարատ լեռը Զուարթնոցի տաճարէն դիտելն էր, որովհետեւ այդ օրը լեռը բացառիկ յստակութեամբ կը տեսնուէր:

Յարութ Ապաճեան

ՎԵՅԵՐՈՐԴ ՕՐ

Վեցերորդ օրը սովորական ժամուն արթնցանք, նախաճաշեցինք եւ մեկնեցանք հիւրանոցէն: Նախ այցելեցինք Խոր Վիրապ: Հոն, լսեցինք Խոր Վիրապի պատմութիւնը եւ ազատ ժամանակ ունեցանք, պտտելու եկեղեցիին շրջակայքը: Ես եւ ընկերներս իջանք այն վայրը, ուր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ բանտարկուած էր, եւ հոն նկարուեցանք: Ապա փորձեցինք բարձրանալ եկեղեցիին կողքին գտնուող բլուրը. եւ ուրախ եմ, որ յաջողեցանք:

Անկէ ետք, վերադարձանք հանրակառք եւ մեկնեցանք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երեւանի գրասենեակ, որ հիմնականին մէջ թանգարան մըն էր՝ նուիրուած ՀՅԴ-ի պատմութեան: Խումբը բաժնուեցաւ երկուքի, աւելի մօտէն հետեւելու համար բացատրութիւններուն:

Այնուհետեւ, այցելեցինք Մայր Հայաստանի արձանը: Յետոյ, մեկնեցանք «Սխտոր» ճաշարան, ուր ինծի համար եղաւ օրուան լաւագոյն պահերէն մէկը: Հոն կերանք ամենահամեղ տապկուած հաւը եւ երգեցինք յեղափոխական երգեր: Այս մէկը եղաւ օրուան ամենագեղեցիկ պահը, որովհետեւ ընկեր Համբիկ



Սասունեանին այդքան ուրախ տեսնելը բոլորիս մեծ ուրախութիւն պատճառեց:

Եւ այսպէս մեր ճամբորդութեան վեցերորդ օրը հասաւ իր աւարտին:

Ռազմիկ Թորիկեան

ԵՕԹԵՐՈՐԴ ՕՐ

Օրը Հայաստանի մէջ սկսաւ ուրախ տրամադրութեամբ, եւ մենք առաջին հերթին այցելեցինք Նորավանք՝ հիանալով անոր գեղեցիկ բնութեամբ եւ շքեղ եկեղեցիներով: Մենք ամբողջ օրուան ընթացքին համեղ ճաշեր կերանք եւ հաճելի ժամանակ անցուցինք: Բաւական զբաղ օր մըն էր. շատ հաճելի էր մասնակցիլ տարբեր ծրագիրներու եւ վայելել Երեւանի մթնոլորտը: Երեկոյեան, երբ հիւրանոց վերադարձանք, հանգստացանք եւ միասին խօսեցանք այդ օրուան յուշերուն մասին:

Էմմա Քէշիշեան



ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

Մեր հայաստանագնացութեան ութերորդ օրը Վարդավառի տօնն էր: Այդ առաւօտ մեր վարիչին առաջնորդութեամբ քանի մը ընկերներով նախաճաշի գացինք: Ճամբուն վրայ նկատեցինք, որ Վարդավառի տօնակատարութիւնը արդէն սկիզբ առած էր եւ փորձեցինք չթրջուիլ: Նախաճաշը աւարտելէ ետք, հիւրանոց վերադարձանք եւ միւս պատանիներուն միանալով ուղղուեցանք Հանրապետութեան Հրապարակ: Այնտեղ ժամերով ջուրով խաղցանք եւ շատ լաւ ժամանակ անցուցինք: Երբ մեր ազատ ժամը հասաւ իր աւարտին, բոլորս միասին ուղղուեցանք Burger King ճաշելու,

որմէ ետք հիւրանոց վերադարձանք: Հիւրանոցը մեր սենեակի պատշգամբէն անցորդներուն վրայ ջուր թափեցինք: Քանի մը ժամ ետք, ընթրիքի գացինք: Ճաշարանը մեր հիւրանոցին շատ մօտ էր: Հոն, առաջին անգամ ըլլալով խինկալի համտեսեցինք: Եւ այսպիսով աւարտեցինք մեր ճամբորդութեան ութերորդ օրը:

Մովսէս Աղամեան



ԻՆԵՐՈՐԴ ՕՐ

Մեր հայաստանագնացութեան իներորդ օրը ինծի համար շատ կարեւոր օր մըն էր, որովհետեւ ամբողջ ճամբորդութեան ամենասպասուած պտոյտս վերջապէս հաւսած էր, կ'ուղղուէինք դէպի Գիւմրի: Հոն, խաղցանք Let's Go, Let's Play խաղը, որուն նպատակն էր ծանօթանալ Գիւմրիի տարածքին եւ անոր բնակիչներուն:

Բաժնուեցանք պզտիկ խումբերու եւ սկսանք մեր փնտռուիքը: Թէեւ մեր խումբը յաղթական չեղաւ, ես եւ ընկերներս շատ լաւ ժամանակ անցուցինք այս խաղին շնորհիւ: Խաղի աւարտին, ուղղուեցանք Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի, որուն յատուկ ճարտարապետութիւնը շատ լաւ տպաւորութիւն ձգեց վրաս: Գեղեցիկ էր տեսնել այդ նարնջագոյն ու սեւ քարերը: Ինքզինքս թէ՛ հպարտ, թէ՛ բախտաւոր զգագի, որ հայ եմ: Օրը աւարտեցինք Պոնչիկ Մոնչիկ ճաշարանէն պոնչիկ ուտելով:

Նարեկ Մանուկեան

ՏԱՍԵՐՈՐԴ ՕՐ

Օրը սկսանք համեղ նախաճաշով մը: Այնուհետեւ ուղեւորուեցանք Դիլիջան եւ Հաղարծին, ուր հիացանք գեղեցիկ բնութեամբ եւ շատ բան տեղեկացանք այդ վայրերու պատմութեան մասին: Ապա, ճաշեցինք Քարահունջի մէջ, ուր ճաշը շատ համեղ էր, եւ հաճելի ժամանակ անցուցինք միասին: Այցելեցինք նաեւ Սեւանայ լիճ, ուր քանի մը ժամ լողալէ ետք, խաղեր խաղցանք Սեւանի ափին: Յետոյ, այցելեցինք Հայրավանք, որմէ ետք անցանք Նորադուի խաչքարադաշտը: Բոլորս մեծ հաճոյքով շրջեցանք եւ վայելեցինք

այս գեղեցիկ վայրերը: Իսկ երեկոյեան ընթրեցինք Ծովասար ճաշարանին մէջ, ուր համտեսեցինք Սեւանայ լիճի յայտնի իշխանածուկը: Օրուան վերջաւորութեան վերադարձանք Երեւան՝ մեզի հետ տանելով բազմաթիւ հաճելի եւ անմոռանալի յիշատակներ:

Ծիլա Քէշիշեան



Հայաստանագնացութեան վերջին օրերը պատանիներուն համար եղան շատ ազդեցիկ եւ յիշատակելի օրեր:

Անոնք այցելեցին Թումօ կեդրոն ու հիացան Երեւանի արուեստագիտական յառաջդիմութեամբ: Անոնք այցելեցին նաեւ «Արամ Մանուկեան» կեդրոն, ուր առիթ ունեցան ծանօթանալու Երեւանի պատանեկան եւ երիտասարդական միութիւններու անդամներուն: Մթնոլորտը ջերմ էր եւ հաճելի. պատանիները խաղցան ինքնազարգացման խաղեր, երգեցին ազգային-հայրենասիրական երգեր եւ պարեցին հայկական, ասանդական պարեր: Անոնք հիւրանոց վերադարձան հարստացած՝ նոր գիտելիքներով, անմոռանալի յիշատակներով եւ ամէնէն թանկագինը՝ նոր ընկերներ ձեռքբերելով:

Պտոյտի վերջընթեր օրը, պատանիները առիթը ունեցան ունկնդրելու Hayat Project երաժշտական խումբին համերգը: Այդ ճոխ մթնոլորտին մէջ, անոնք ոչ միայն վայելեցին խմբակին սքանչելի ներկայացումը, այլ նաեւ ըմբոխշնչեցին իրենց վերջին վայրկեանները իրենց ընկերներուն հետ, իրենց շատ սիրելի հայրենիքին մէջ:

ՆՈՐ ԱՍՏՂԵՐ

«Հորիզոն» Մանկապատանեկանի «Նոր Աստղեր» սինակը պիտի տրամադրուի 10-էն մինչեւ 20 տարեկան, բոլոր տաղանդաւոր անհատներուն, որոնք կը փափաքին գրել ու ներկայացնել իրենք զիրենք մեր ընթերցողներուն:

Հետեւաբար եթէ կը պարես կամ կը նուագես, եթէ կ'երգես, կ'արտասանես կամ կը գծես, եթէ կը սիրես գրել կամ եթէ դերասանական ձիրքեր ունիս, գրէ քու մասիդ եւ ուղարկէ գրութիւնդ հետեւեալ ե-նամակի հասցէին sylva@horizonweekly.ca

Այս թիւի նոր աստղն է Շիրազ Բէնէնեան:



Բարեւ, ես Շիրազն եմ. ծնած եմ 1 Յունուար 2012-ին, Լիբանան: Փոքր տարիքէս յատուկ սէր եւ հետաքրքրութիւն ունեցած եմ երաժշտութեան նկատմամբ: Ինքզինքս բախտաւոր կը զգամ, որովհետեւ ծնողքս նկատելով այս հետքերութիւնս, հինգ տարեկանիս արդէն արձանագրած են զիս Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական Քոլէճ, ուր հետեւած եմ սրինգի դասերու:

2020-ին, երկու երաժշտական գործիքներու՝ սրինգի եւ flute traversière-ի դասերու հետեւած եմ Լիբանանի Պետական Երաժշտանոցին մէջ՝ ստանալով աւելի բարձր մասնագիտական պատրաստութիւն: Միեւնոյն ժամանակ մաս կազմած եմ Լիբանանի ազգային փողային նուագախումբին՝ LeBAM-ին, դառնալով անոր ամենէն փոքրիկ անդամը: LeBAM-ի հետ մասնակցած եմ բազմաթիւ համերգներու, ինչպէս՝ La Fête de la Musique, Summer Night Concert եւ ամանորին նուիրուած նուագահանդէսներու, ինչպէս՝ The sound of Christmas-ը, The King Of Peace Is Born-ը:

Ուրախ եմ յայտնելու, թէ մասնակցելով նման համերգներու ունեցած եմ բեմական փորձառութիւն, խմբային ներդաշնակութեան որոշ մակարդակ եւ ինքնավստահութիւն:

2022-ին մաս կազմած եմ Համազգայինի Լիբանանի «Նայիրեան» աշակերտական նուագախումբին, միաժամանակ մասնակցելով «Բարսեղ Կանաչեան» երաժշտական Քոլէճի համոյթներու ելոյթներուն:

2025-ին ընտանիքով հաստատուեցանք Գանատա եւ արձանագրուեցայ Vanier College-ի երաժշտական դպրոցը, շարունակելու իմ երաժշտական ուսումս: Նոյն տարին, միացայ L'Orchestre des Jeunes de Laval-Lauréntides նուագախումբին, մասնակցելով զանազան համերգներու, ներառեալ Trésors Nationaux ծրագրին, այլ նուագախումբի հետ:

5 Ապրիլ 2026-ին, մասնակցեցայ AOJQ – Association des orchestres de jeunes du Québec-ի 22-րդ փառատօնին՝ ութ տարբեր նուագախումբերու եւ շուրջ 250 երիտասարդ երաժիշտներու հետ միասին:

Մոնթրէալաբնակ հայութիւնը աւելի ծանօթ է ինծի, որովհետեւ հայկական թէ օտար գեղեցիկ կտորներ նուագած եմ համայնքային եւ մշակութային ծեռնարկներու, ինչպէս՝ Համազգայինի ամանորի տարեկան ծեռնարկին, Կանանց Միջազգային Օրուան նուիրուած հանդիսութեան եւ Ապրիլ 24-ի նուիրուած յիշատակի ծեռնարկին: Ելոյթ ունեցած եմ նաեւ Համազգայինի «Քնար» երգչախումբի տարեկան համերգին: 9 Մայիս 2026-ին մասնակցած եմ Festival-Concours Marcelle-Corneille երաժշտական գործիքներու տարիքային մրցոյթին, UQAM համալսարանին մէջ եւ արժանացած եմ երկու կարեւոր մրցանակներու՝

- Արծաթեայ մետալ՝ սրինգի կատարումի:
- Ոսկեայ մետալ՝ flute traversière-ի կատարումի:

Կ'ուզեմ նաեւ նշել, թէ մասնակցութիւն բերած եմ սոյն մրցոյթի Կալա Համերգին, UQAM համալսարանին մէջ եւ արժանացած՝ դատակազմին եւ հանդիսատեսներուն բարձր գնահատանքին:

Շիրազ Բէնէնեան

Ո՛Վ Կ'ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Սեպտեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 9 Հոկտեմբեր 2026: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը «Հորիզոն»ի խմբագրատուն՝

3401 Olivar Asselin
Montréal, Québec, H4J 1L5

1. Ո՞ր թուականին տեղի ունեցաւ Արցախի անկախութեան հռչակումը:

- ա- 21 Սեպտեմբեր 1991-ին:
- բ- 2 Սեպտեմբեր 1991-ին:
- գ- 9 Սեպտեմբեր 1922-ին:

2. Երբ տեղի ունեցաւ Արցախի 44-օրեայ պատերազմը:

- ա- 21 Սեպտեմբեր 1991-ին:
- բ- 2 Սեպտեմբեր 1991-ին:
- գ- 9 Սեպտեմբեր 1922-ին:

3. Ինչ տեղի ունեցաւ 21 Սեպտեմբեր 1991-ին:

- ա- Թուրքերը գրաւեցին Իզմիրը:
- բ- Հայաստան անկախացաւ 2-րդ անգամ ըլլալով:
- գ- Հայկական ուժերը ազատագրեցին Շուշին:

4. Արցախի դր շրջանին մէջ նահատակուեցաւ Մհեր Զուլհաճեանը:

- ա- Ասկերան
- բ- Շահումեան
- գ- Մարտունի

5. Արցախի դր կողմը կը գտնուի Մարտունի շրջանը:

- a. Հարաւ-արեւելեան
- b. Հարաւ-արեւմտեան
- c. Հիւսիս-արեւելեան

6. Ինչո՞ւ կարեւոր եղած է Ամարասի վանքը:

- ա- Հոն արքայութեան է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:
- բ- Հոն թաղուած է Դաւիթ Բէկը:
- գ- Հոն Մեսրոպ Մաշտոց բացած է նահանգի առաջին դպրոցը:

7. Ո՞քան երկար է կռուակին հասակը:

- ա- 90-150 սմ.:
- բ- 90-155 սմ.:
- գ- 80-150 սմ.:

8. Պանդուխտը հայրենիքէն հեռու, աշխատելու եւ իր ապրուստը վաստակելու համար օտար երկրի մը մէջ ապրող անձն է:

- ա- ճիշդ:
- բ- Սխալ:

9. Պանդխտութեան երգերուն մէջ, դր թռչունին անունը կը նշուի:

- ա- Ծիծեռնակին:
- բ- Սոխակին:
- գ- Կռունկին:

10. Ո՞ր ծովուն շրջակայքի երկիրներուն մէջ կ'աճին թուզերը:

- ա- Միջերկրական ծովուն:
- բ- Կարմիր ծովուն:
- գ- Սեւ ծովուն:

ԹՈՒՋ




բոյս: Տարածուած է Միջերկրական ծովի երկիրներուն, Վրաստանի, Հայաստանի լեռներուն եւ Ապշերոնի թերակղզիին մէջ: Թուզը կը համարուի ամենէն հին մշակուող բոյսերէն մէկը:

Թզենին բաց մոխրագոյն հարթ կեղեւով ծառ մըն է, տերեւները մեծ են, արտաքինէն՝ մուգ կանաչ: Թուզերը ունին շատ իւրայատուկ հոտ, փրցնելու ատեն կը նկատուի հիւթի արտահոսքը, որ ըստ կարգ մը ազգերու աւանդութեան պտղաբերութիւն կը խորհրդանշէ: Թուզը հիւթալի, քաղցր, տանձանման, մէջը հունտերով պատու է: Այս պտուղը ծածկուած է բարակ, փոքր մագիկներ ունեցող կեղեւով մը եւ ունի տարբեր գոյներ՝ դեղինէն մինչեւ սեւ եւ կապոյտ: Աւելի շատ տարածուած են դեղին եւ կանաչ թուզերը:

Չոր թուզը եւ չոր թուզով պատրաստուած անուշապուրները սննդական աւելի արժէք կը ներկայացնեն, քան թարմը, իսկ թուզի բոլոր անուշեղէններն ու օշարակները սնուցիչ են: Թուզը դիւրամարս է եւ մատչելի՝ ամենէն փափուկ ստամոքսներուն իսկ: Իր պարունակած փոքրիկ հունտերը կ'աշխուժացնեն ստամոքսին եւ աղիքներուն աշխատանքները: Թուզը կը պարունակէ նաեւ հանքային աղեր, որոնք կը մաքրեն աղիքներու կուտակուած թոյները:

ԽԱՂ

Օգնէ՛ հայ պատանիին, որպէսզի ան հասնի հայրենիք:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylva@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւը պատրաստեց Եսենիա Քելլեանը
Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի